

ԴԱՐՔԻՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ

1. Դարբնոցը համայնքի կոմունիկացիոն համակարգում

Աշխատանքի այս բաժնի նյութը հավաքվել է Վայոց ձորի գիտարշավների ընթացքում: Տեսական որոշ դրույթների ընտրության գործում շատ կարևոր նշանակություն են ունեցել Տ.Ա. Բեռնշտայնի,¹ Լ.Յ. Աբրահամյանի,² Ա. Գուլյանի,³ Յա. Վ. Չեսնովի,⁴ Գ. Ն. Գրաչովայի,⁵ Ֆեյ Սյաոտունի,⁶ Ն. Ի. Տոյստոյի⁷ և Ա. Ս. էյզենշտեյնի⁸ մի շարք ուսումնասիրությունները, որպիսիք կողմնորոշիչ և հուշող դեր են կատարել հավաքված նյութը դիտարկելիս:

Հիմնախնդիրը քննարկել ենք չորս առումով. ա) դարբինը համայնքի կոմունիկացիոն համակարգում, բ) սեռատարիքային խմբերը և դարբնոցը, գ) ժառանգականության դրսևորումը դարբնության մեջ, դ) իոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևերը դարբնոցում՝ երկու մակարդակում, առաջին՝ դարբնոցը համայնական առօրեական կոմունիկացիոն համակարգում (պրոֆան մակարդակ), երկրորդ, դարբնոցի տեղը համայնք-գերբնական ուժեր հաղորդակցման մեջ (սակրալ մակար-

դակ): Կդիտարկվեն նաև այդ երկու մակարդակում գործող սիմետրիկ և ասիմետրիկ կառուցվածքային դրսևորումները:

Դարբնոցը համայնական առօրեական կոմունիկացիոն համակարգում: Դարբնոցի հետ կապված, կենցաղային գործնական նպատակներով դրսևորվող կոմունիկատիվ երևույթների շարքում առաջնային նշանակություն ունի դարբնի և համայնքի փոխհարաբերությունների պարզաբանումը: Լյս առումով դարբինը բաժին ուներ գյուղատնտեսական աշխատանքների հաջող ընթացքի ապահովման մեջ: Նա էր փաստորեն և երկրագործական մի շարք առաջնային նշանակության գործիքների, այդ թվում՝ գութանի և արորի խոփի,⁹ մանգաղի, բահի, քաղհանի ուրագի պատրաստողը, եգներին ու ձիերին պայտողը: Դարբինն էր նաև համայնքի այլ արհեստավորների (իյուսևն, քարգործ) գործիքները կռող-կոփողը, որի շնորհիվ նրան գյուղում անվանում էին վարպետաց-վարպետ (ուստեքի միջի ուստա):¹⁰ Վայոց ձորում ընդհանուր գյուղերը չէ, որ դարբնոց ունեին: Ուստի դարբնի և դարբնոցի սպասարկման շրջանակները դուրս էին գալիս գյուղի սահմաններից, ընդգրկելով 4-5 և ավելի գյուղ:¹¹ Այնպես որ, դարբինը գյուղի այն եզակի մարդկանցից էր, որի ճանաչողության սահմանները տարածվում էին գյուղի շրջանակներից դուրս և որպես համբավավոր վարպետ, նա հարգանք ու հեղինակություն էր վայելում նաև հարևան գյուղերում: Թերևս դա է պատճառն այն դեպքերի, երբ չնայած որևէ գյուղում եղել է դարբնոց, սակայն այդ գյուղի ընկալիչները գործիքներ են պատվիրել ուրիշ գյուղերում,

¹ *Т.А. Бернштайн*, Молодежь в обрядовой жизни русской общины (XIX - начало XXв.), Л., 1988.

² *Л. Абрамян*, Типы симметрии и человеческое общество.- Семiotics и проблемы коммуникации, Ереван, 1981.

³ *А. Гулян*, Коммуникативные движения у армян.- Семiotics и проблемы коммуникации, Ереван, 1981.

⁴ *Я.В. Чеснов*, Шаг Моитрейн: некоторые аспекты изучения кинесики.- Этнографическое изучение знаковых средств культуры, Л., 1989.

⁵ *Г.Н. Грачева*, Этнографические особенности языка культуры. - Этнографическое изучение знаковых средств культуры, Л., 1989.

⁶ *Фей Сяотун*, Китайская деревня глазами этнографа, М., 1989.

⁷ *Н.И. Толстой*, О природе связей бинарных противопоставлений типа правый-левый, мужской-женский.- Языки культуры и проблемы переводимости, М., 1981.

⁸ *С.М. Эйзенштейн*, Чет-нечет. Раздвоение единого.- Восток-Запад, вып. 2, М., 1988.

⁹ Վայոց ձորում հիմնական կիրառելի վարող գործիքը եղել է կատարելագործված արորը «վեսկի» անվանմամբ:

¹⁰ *Ա.Թաղևոսյան*, ԴԱՆ, տ. 1, էջ 38, 43:

¹¹ *Անդ*, տ. 2, էջ 3, 42, 54:

որոնց դարբիններն ավելի հմուտ են համարվել:¹² Նման դեպքերում երկու գյուղի դարբինները, բախումից և թշնամությունից խուսափելու նպատակով, խնամհական կապեր են հաստատել միմյանց ընտանիքների միջև, պայմանավորվելով չընդունել մյուս գյուղացիների պատվերները:¹³

Արտադրանքի բնույթի հետ կապված, դարբնոցում գոյություն է ունեցել փոխանակման որոշակի կարգ դրամական և բնամթերսային ձևերով: Բնամթերքով վճարումը հիմնականում կատարվել է հացահատիկով, երբեմն նաև մանր եղջերավոր անասուններով: Գործել է փոխհատուցման մի կարգ ևս: Բավականաչափ գումար կամ բնամթերք չունենալու դեպքում, պատվիրատուն պարտավորվել է աշխատել դարբնի ընտանիքին պատկանող հողահանդակում, կատարելով որոշակի աշխատանքներ, որոշակի ժամանակում: Վերջիններս որոշվում էին ըստ պայմանավորվածության, ելնելով պատվիրվող առարկայի արժեքից:¹⁴ Պատվորատուներից շատերը, որոնց պատվերը դարբնից երկար ժամանակ խլուր աշխատանք է պահանջել, իրենք են լուծել դարբնի ճաշելու հարցը: Սովորաբար, մասն դեպքում դարբնոց տարել են ձվածեղ, երբեմն էլ ձավարեղենից պատրաստված ճաշ:¹⁵ Սակայն ընդհանուր կերակուրը չէր ազդում փոխվճարի արժեքի վրա: Ավելին, դարբինը բերվածին իր կողմից ավելացնում էր այլ ուտելիքներ, հաճախ էլ գինի ու ճաշում պատվիրատուի հետ: Դարբնի հետ «հաց կիսելը» ցանկալի և պատվաբեր էր գյուղացիների համար:¹⁶ Այս առիթով պետք է նշել նաև, որ դարբինը միշտ համարվել է հաճելի, «թեթև ոտք» ունեցող (հաջողություն բերող) հյուր և նրա այցելությունը միշտ էլ ուրախությամբ է ընդունվել ամեն մի տանը: Դարբնի այցելությունը գերադասելի էր հատկապես որևէ գործ նախաձեռնելիս՝ ասենք, մածուց մերելիս կամ յուղ հալելիս:¹⁷ Պատահել է նաև, որ նոր գործ ձեռնարկելիս տանտերը հատուկ հրավերով հյուրընկալել է դարբնին: Հարսանիքների ժա-

մանակ նույնպես դարբինը դասվել է հրավորված պատվավոր հյուրերի շարքը:¹⁸

Չնայած համայնքում ունեցած արտոնյալ դիրքին, դարբինը և նրա գերդաստանը ենթարկվել են համայնքային չափանիշներին, որոնցից առաջնայինը եղել է համայնքի անդամ ճանաչվելը: Ըստ մեր գրանցած նյութի, դարբնին, եթե նա նորեկ էր, նույնիսկ նրա արհեստի կարևորության գիտակցման դեպքում, խոչընդոտում էին հաստատվել գյուղում: Միայն գյուղացիներից որևէ մեկի հետ խնամհական կապեր հաստատելուց հետո էր, որ նա ճանաչվում էր համայնքի լիիրավ անդամ և իրավունք ստանում գյուղում դարբնոց հիմնելու:¹⁹ Դարբնոցը համարվում էր տվյալ գերդաստանի սեփականությունը և դարբնոցի համար, ի տարբերություն սեփականության մյուս ձևերի (այգի, ջրաղաց, դաշտեր), հարկ չի վճարվել, որը գյուղացիների կողմից րացատրվում է այն բանով, որ դարբնոցը ոչ միայն դարբնին ու նրա ընտանիքին է կերակրել, այլ ամբողջ գյուղին:²⁰ Նկատի ունենալով դարբնոցին համայնական այս մոտեցումը, կարծես տրամաբանորեն հակասական էր դարբնոցի շինարարությանը համայնքի չմասնակցելը: Եթե համայնքի անդամներից որևէ մեկի տուն կառուցելն իբրև կանգնում էր համայնականների օգնությամբ, ապա դարբնոցը շինվում էր միայն դարբնի և նրա մերձավոր ազգականների ուժերով:

Համայնքային կիմունիկացիոն համակարգում յուրօրինակ դրսևորում է ստացել նաև դարբնոցի և դարբնի հետ սեռատարիքային խմբերի կապը: Ըստ տարիքային խմբերի, գյուղի բնակչությունը բաժանվում էր հիմնականում երեք՝ երեխաների, հասունների և ծերերի:²¹ Դարբնոցի հետ տարիքային խմբերի հաղորդակցումն ուղեկցվել է նրանց պատկանելության հատկանիշով: Աբական սեռի ամեն մի տարիքային խմբի անդամի մուտքը դարբնոց ազատ էր: Դարբնոցը «երեխա տղաների» սիրած հավաքատեղերից էր՝ հավաքվում էին մուտքի մոտ կամ ներսի որևէ ազատ անկյու-

¹² ԱճՊ, էջ 42:

¹³ ԱճՊ, տ. 1, էջ 3:

¹⁴ ԱճՊ, տ. 2, էջ 17:

¹⁵ ԱճՊ, էջ 67:

¹⁶ ԱճՊ, էջ 67:

¹⁷ ԱճՊ, էջ 21:

¹⁸ ԱճՊ, էջ 20:

¹⁹ Ա.Թաղևորյան, ԴԱՆ, տ. 2, էջ 19:

²⁰ ԱճՊ, էջ 9:

²¹ Սրանցից յուրաքանչյուրի մեջ կարելի է առանձնացնել ենթախմբեր, սակայն մեր աշխատանքում դիտարկվում է ըստ նշված խմբերի:

նուն: Նրանցից ամեն մեկի համար հայարտանալու առիթ կարող էր լինել, եթե դարբինը դիմեր իրեն օգնելու կամ «փուքս քաշելու» (փուքսն աշխատեցնել) խնդրանքով:²² Հասուն տղամապիկ դարբնոց դիմել են այս կամ այն պատվերի առիթով, իսկ ծերերը հագվադեպ են հանդիպել դարբնոց:

Կանանց տարիքային խմբերի հաղորդակցումը դարբնոցի հետ էականորեն հակառակ պատկեր է ունեցել: «Երեխա աղջիկները» գիտեին, որ դարբնոցն իրենց տեղը չէ և չէին էլ փորձում գնալ այնտեղ, քանի որ նման արարքն արժանանում էր մեծերի հանդիմանությանը: Հասած աղջիկները, առավել ևս ամուսնացած կանայք, ոչ միայն հանդիմանանքի էին ենթարկվում, այլ նրանց մուտքը դարբնոց ուղղակի արգելված էր և նման փորձ ոչ մի կին իրեն թույլ չէր տա, քանի որ դա կարող էր պատժվել ամուսնու կողմից և գյուղացիների աչքում զնահատվել որպես խայտառակ արարք: Դա համարվում էր նաև որպես դարբնի պատվի ու հարգանքի նկատմամբ ոտնձգություն: Կանանց հաղորդակցումը դարբնոցի հետ իրականացվում էր պառավների տարիքային խմբի միջոցով: Տնտեսական առումով կանայք, սովորաբար, դարբնոցի հետ շփման քիչ եզրեր ունեին: Դա կարող էր լինել դանակ, թոնրի շիշ կամ երբեմն նաև քաղհանի ուրագ պատվիրելու առիթով, որն իրականացնում էր տարեց կանանցից որևէ մեկը: Իսկ հիմնականում, կանայք դարբնոց դիմում էին ծիսական բնույթի աուսրկաներ կամ չարխափան հմայիլներ ձեռք բերելու համար: Այդ հմայիլները հիմնականում կապված էին ծննդաբերության հետ և անպայմանորեն ձեռք էին բերվում սկեսրոջ միջոցով:²³ Նույնիսկ դարբնի ընտանիքի անդամ կանանց մուտքը դարբնոց արգելված էր: Միայն դարբնի մայրը կամ կինը կարող էր մտնել դարբնոց և այն էլ, երբ դարբինը չէր աշխատում, իսկ հարսների և աղջիկների մուտքը համարվում էր դարբնի նկատմամբ անհարգալից վերաբերմունք:²⁴

Համայնքի կոմունիկացիոն համակարգի հաստատումն օդակներից մեկը ժառանգականության ավանդույթն է, որը ընտրոշ է նաև

դարբնության և դարբնոցի ժառանգական փոխանցման սովորույթին: Դարբնոցը որպես սեփականություն պատկանում էր գերդաստանին և ոչ դարբնին: Որպես կանոն, այն անցնում էր գերդաստանի այն տղամարդու տնօրինությանը, ով ժառանգում էր դարբնությունը: Արհեստը դարբինը փոխանցում էր իր որդիներից որևէ մեկին, իսկ որդի չունենալու դեպքում եղբոր որդիներից որևէ մեկին: Արհեստը հաջորդ սերնդին փոխանցելու մեջ որպես չափանիշ ընտրվում էր ոչ թե տարիքային հատկանիշը, այլ արհեստի նկատմամբ ցուցաբերած առավել ունակություններն ու հետաքրքրությունը: Իսկ եթե նման հատկանիշ ցուցաբերում էին որդիներից մի քանիսը, ապա վարպետության իրավունքը հորից ժառանգում էր ավագը և ըստ դրա էլ որոշվում էր գլխավոր օգնականի և օգնականի տեղը որդիների մեջ:²⁵ Եթե դարբնությունը ժառանգած որդիներից որևէ մեկը բաժանվել է գերդաստանից, ապա վերջինիս և համայնքի կողմից նրան իրավունք է վերապահվել հիմնելու նոր դարբնոց: Նման իրավունք ցանկության դեպքում տրվել է նաև դարբին վարպետի եղբորորդուն, եթե դարբնի որդիներից որևէ մեկին է ժառանգվել «հին» դարբնոցը:²⁶ Արհեստը շատ հագվադեպ է դուրս եկել գերդաստանի սահմաններից: Նման դեպքում, սովորաբար, վարպետը ոչ ազգակից իր աշակերտին արհեստին տիրապետելու ոչ բոլոր գաղտնիքներն է հայտնել: Արհեստը գերդաստանից (ընտանիքից) դուրս է եկել կամ արուզավակների բացակայության կամ նրանց ապաշնորհության դեպքում: Նման դեպքերում այն գերդաստանը, որին պատկանում էր «նոր» դարբինը, կամ գնում էր դարբնոցը, կամ իրավունք ստանում հիմնելու նորը: «Հին» դարբինն այդ ժամանակ պարտավոր էր օրհնել «նոր» դարբնոցի գնդանը:²⁷

Հաղորդակցումը դարբնոցում կատարվում էր խոսքային և ոչ խոսքային միջոցներով: Դրանցում կարելի է գտնել թե համայնքում տարածված, թե միայն դարբնոցին և դարբնությանը բնորոշ տարրեր: Առաջինի թվին են պատկանում ողջույնի ձևերը: Հայերի մեջ

²² Ա.Թադևոսյան, ԴԱՆ, տ. 2, էջ 22:

²¹ Ա.Թադևոսյան, ԴԱՆ, տ. 2, էջ 25:

²⁴ ԱՆՊ, էջ 24:

²⁵ ԱՆՊ, էջ 28:

²⁶ ԱՆՊ, էջ 29:

²⁷ ԱՆՊ, տ. 1, էջ 51:

տարածված ողջույնի ձևերից²⁸ դարբնոցում գործել է մի քանիսը: Դարբնոց մտած մարդը նախ բարձրաձայն ողջունել է դարբնին, իսկ հետո նաև ներսի մյուս մարդկանց: Եթե դարբնոց մտածը պատվավոր մարդ էր, նա ողջունում էր դարբնին ձեռքսեղմումով և փոխադարձորեն փոխանակում հարցումներ որպիսության և գործերի հաջողության մասին: Վերջիններս կազմում էին ողջույնի արարողության բաղկացուցիչ մասը:²⁹ Դրանից հետո դարբնը բարեմաղթելով նրա այցելությունը, նրբանկատորեն փորձում էր իմանալ հյուրի այցելության նպատակը՝ «խեր ըլնի գալը, էս ի՞նչ խաբարա»: Եթե դարբնին ողջունում էին աշխատանքի պահին, նա չէր պատասխանում: Աշխատանքային տվյալ գործողությունը վերջացնելով միայն, նա բարձրաձայն պատասխանում էր ներս մտնողի ողջույնին, հարցնելով գալու նպատակը՝ «ի՞նչ կա» կարճ հարցումով: Դարբնոցում ամեն մարդ ուներ իր տեղը: Դարբնոց մտնողներից ոչ-ոք իրավունք չուներ ձեռք տալու գործիքներին, հենվելու կամ նստելու գնդանին: Դարբնոց մտածի տեղը մուտքի մոտ էր և ազատ շարժվել դարբնոցում չէր թույլատրվում:³⁰

Դարբնոցի անդամների միջև կարելի է տարբերակել հաղորդակցման երկու ձև: ոչ աշխատանքային և աշխատանքային: Առաջինում գերակշռում է հաղորդակցման խոսքային ձևը, երկրորդում՝ շարժանշանները: Դարբնի ազդանշանային լեզուն աշակերտի հետ աշխատանքի հաղորդակցման միակ միջոցն էր: Սակայն այստեղ էլ պետք է առանձնացնել մի ուշագրավ երևույթ: Միայն ազդանշանների լեզվով հաղորդակցումը բնորոշ է գնդանով կատարվող աշխատանքային գործընթացներին: Այդ ազդանշանների մեջ էլ կարելի է առանձնացնել երկուսը՝ ազդանշան, որով կողմնորոշվում է աշակերտը երկաթը կոելիս, և ազդանշան, որի համաձայն աշակերտը դարբեցնում է աշխատանքը: Առաջինի էությունն այն էր, որ կոման գործողությունն սկս-

վում էր գնդանին մուրճով դարբնի հարվածելուց հետո: Հաջորդ հարվածը դարբնը տալիս էր մշակվող երկաթի այն մասին, որին պետք է հարվածեր աշակերտը (օգնականը) իր մեծ մուրճով (կռան): Աշակերտ-օգնականը նույն տեղին հարված հասցնելու համար կողմնորոշվում էր վարպետի կողմից գնդանին հասցվող հարվածների միջոցով: Ձնդանին հասցված վարպետի ամեն մի հարված օգնականի համար նշանակում էր կոկնել այն: Միայն օգնականի հարվածի ուղղությունը փոխելիս էր վարպետը մուրճով հարվածում մշակվող երկաթին, ցույց տալով մշակման անհրաժեշտ տեղը և նորից կոկնում հարվածները³¹: Օգնականի աշխատանքի դադարն այս դեպքում ազդարարում էր գնդանի վրա հորիզոնական դիրքով շուռ տրված վարպետի մուրճը:³² Ի դեպ, Հայաստանի որոշ գյուղերում նշված նպատակներով օգտագործվել են ազդանշանային այլ միջոցներ: Օգնականն այդ դեպքում կողմնորոշվել է ոչ թե գնդանին, այլ անմիջականորեն երկաթին հասցվող հարվածներով: Սկզբում հարվածել է վարպետը փոքր մուրճով, իսկ հետո նույն տեղին օգնականը՝ մեծ մուրճով:³³ Այս դեպքում օգնականի աշխատանքի ավարտն ազդարարվել է վարպետի կողմից գնդանին երկու անընդմեջ հարված հասցնելու միջոցով: Օգնականը, դադարեցնելով աշխատանքը, իր մուրճը դրել է գնդանի կոճղի մոտ, գետնին, պոչը վեր ցցված, իսկ ինքը, քանի դեռ վարպետն աշխատում էր, կանգնած մնացել է իր մուրճի մոտ դեմքով դեպի գնդանը: Օգնականի դուրս գալուց հետո վարպետը ոիթմիկ հարվածների միջոցով՝ սկզբում՝ մեկ երկաթին, մեկ՝ գնդանին, իսկ հետո՝ երկու երկաթին, մեկ գնդանին, ավարտին էր հասցնում տվյալ առարկայի պատրաստումը: Իրի պատրաստման ավարտը վարպետն ազդարարում էր գնդանին երեք անընդմեջ հարված հասցնելով:³⁴

Դարբնոցի տեղը համայնք-գերբնական ուժերի հաղորդակցման մեջ: Համայնքային կոմունիկացիոն համակարգը չի սահմանափակվում հաղորդակցման և փոխհարաբերությունների պրակտիկ-գործնական ոլորտով և

²⁸ А. Гулян, указ. соч., с. 125-127.

²⁹ Ողջույնը լրացնող և դրա մի մասը կազմող տարրերի ուսումնասիրությունը լայնորեն դիտարկել է Ն.Լ. ժուկովսկայան. *И.А. Жуковская, Категории и символика традиционной культуры монголов*, М., 1988, сс. 92, 111-114.

³⁰ *Ա.Թադևոսյան*, ԴԱՆ, տ. 2, էջ 6, 61:

³¹ *ԱՆդ*, էջ 63:

³² *ԱՆդ*, էջ 63:

³³ *ԱՆդ*, էջ 82:

ճերառուս է նաև համայնքի ու գերբնական ուժերի միջև հաղորդակցման, դրա հետ կապված համայնքի սրբազան կյանքում համայնականների միջև իրականացվող խորհրդանշային-ժիսական հարաբերությունների մակարդակը: Այս առումով դարբինը համայնքում նույնպիսի կարևոր դեր ունի, ինչպես աշխարհիկ-գործնական հարաբերություններում: Դարբնի այս գործառնություն կարելի է առանձնացնել համայնական հաղորդակցման երկու կտրվածք: Առաջինը, երբ դարբինը մասնակցում է համայնքային ցիկլային տոնական կյանքին և երկրորդը՝ ծայրահեղ վիճակների (չար աչքից պահպանելու, վախ բռնելու, երազուս ճչացողներին բուժելու, անհաջող ծննդաբերությունը կանխելու) կարգավորմանը:

Դարբինը համայնքի ցիկլային տոներից առավել ընդգծված մասնակցություն ուներ Ջատկի տոնին: Ջատկիը սեզոնային առումով համապատասխանում է հայկական արեգակնային շարժական տոմարով ավանդական նոր տարուն և իր սիմվոլիկայում ու ծիսաշարքի ենթատեքստում կրում է հինը նորով, քառսը կոսմիկ վիճակով փոխարինվելու, արարչագործության, զարթոնքի և վերածննդի իմաստ: Ջատկր տոնին դարբնի մասնակցությամբ կատարվող ծեսերը նույնպես հազեցած են նշված իմաստավորմամբ և դարբինն այդ ծեսերում կրում է տիեզերապահպան և արարչագործ գերբնական ուժի գործառնություն, որպես չար ուժերի հակառակորդ և մարդկանց դրանց վտանգավոր ազդեցությունից պաշտպանող:³⁵

Ջատկր վերջին շաբաթվա Ավագ Ուրբաթի խավարման կոչվող գիշերը, ժամը 4-5-ի կրկնները, դարբինը գնում էր դարբնոց, առանց որևէ մեկը հետ խոսք փոխանակելու, մինչև լուսանալը, սկսում էր ծիսական (մոգական) ուժ ունեցող երկաթի ծեծելը, որից ամբողջ տարվա ընթացքում գյուղացիների համար պատրաստում էր տարբեր տիպի հմայիլներ:³⁶ Այդ նույն երկաթից նա պատրաստում էր նաև ծիսական մեխեր, որոնցով գյուղացիները գատկի տոնին հարվածում էին գետնին,

իբր թե Զուղայի աչքը հանելու: Ըստ իս. սա պտղաբերության իմաստով համայնքային ծես էր, որում դարբինն ուներ տիեզերապահպան հերոսի դեր: Նման գործառնություն է օժտված դարբինը նաև մի այլ սովորություն, որի համաձայն նա գատկի Ավագ Ուրբաթ օրն «ուրբաթոռուր» չարխափան ապարանջաններ էր պատրաստում կանանց համար:³⁷ Դարբնի գերբնական հատկությունները բնորոշ էին նաև իր միջավայրին՝ այն միկրոկոսմին, որտեղ նա ցուցաբերում էր այդ հատկությունները: Թերևս դա է պատճառը մեր գրառած այն հետաքրքիր սովորության. ըստ որի, շաբաթ երեկոյան կիրակնամուտին ժամանակ, երբ նորից սպասվում է չար ուժերի ակտիվացում, գյուղացիներն այցելում էին դարբնոց գնդանին մոմ կպցնելու (մոմ վառելու) նպատակով:³⁸ Անկասկած, այս սովորությամբ հնամենի մտածողության վերաիմաստավորված դրսևորում է, որում պահպանվել են համայնքի ու գերբնական ուժերի միջև դարբնի և դարբնոցի ունեցած կարևոր դերի արծազանքները: Պատահական չէ, որ դարբինն ամբողջ գյուղում համարվել է միակ մարդը, ում տուն չարքերը և սատանաները չէին կարող մտնել նրանից վախենալու պատճառով:³⁹

Դարբինն այն եզակիներից էր նաև, ով տարվա ցանկացած օր կարող էր գատկին ծեծած մոգական ուժ ունեցող երկաթից չարխափան հմայիլներ պատրաստել գյուղի կանանց և երեխաների համար: Զիմնականում այդ հմայիլները կոչված էին ապահովելու հարսների հաջող ծննդաբերությունը: Դրանք երկաթից պատրաստված ապարանջաններ էին, մատանիներ և վզնոցներ («դող»), որոնք պատվիրում էր հաբսի սկեսուրը:⁴⁰ Դրանց դիմաց դարբնին վարձատրություն տանելը վիրավորանք կարող էր համարվել: Սակայն այստեղ կատարվում էր մի հետաքրքիր փոխանակություն: Պատրաստածի դիմաց դարբնոց, որպես նվեր, բերվում էր մի քանի ծու: Չվոն նույնպես հայերը վերագրում էին չարխափանության հատկանիշ:⁴¹ Չուն նաև գատկր տո-

³⁴ Ա.Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 2, էջ 34:

³⁵ Այդ մասին հանգամանորեն տես երկրորդ գլխում:

³⁶ Ա.Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 2, էջ 5-6:

³⁷ Այդ ծեսերի մասին մանրամասն տես երկրորդ գլխում:

³⁸ Ա.Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 2, էջ 47:

³⁹ ԱՆՊ, էջ 5:

⁴⁰ ԱՆՊ, էջ 41:

⁴¹ ԱՆՊ, էջ 26:

նի գլխավոր խորհրդանիշներից էր և նվեր տալով ծու, դրա դիմաց փոխադարձորեն նվիրատրվում էր Ջատկի Խավարման գիշերը ծեծված մոզական ուժ ունեցող երկաթից պատրաստված չարխափան հմայիլ: Եվ այս փոխադարձ նվիրատվությունը, ժամանակային առումով, խորհրդանշորեն տեղափոխում էր այն կատարողներին Ջատկի սրբազան աշխարհի նախասկզբնական արարման, ծնունդի և չար ուժերի պարտության շրջան, որտեղ ապահովված էր ոչ ցանկալի ազդեցություններից հարսի հաջող ծննդաբերությունը: Նույնպիսի փոխանակություն արվում էր նաև երեխայի ծախ ուսից կախվող դարբնի պատրաստած չարխափան պողպատե կայծքարը ծեռք բերելիս: Երբեմն էլ վախ բռնելու համար օգտագործել են դարբնոցից վերցրած ջուրը:⁴²

Ընդհանրացնելով աշխատանքի այս հատվածը, պետք է ասել, որ դարբնոցը համայնքի հաղորդակցման սակիալ մակարդակում ունի համայնք-միկոոսիեզերքի կենտրոնի և առանցքի (որը համապատասխանում է գլուդում դարբնոցի ընդունված իրական տեղադրվածությանը),⁴³ իսկ դարբինը՝ տիեզերապահական արարչի իմաստ:

Աշխատանքի այս հատվածում կղիտարկենք դարբնոցի և դարբնի հետ կապված, հաղորդակցման կառուցվածքային որոշ կտրվածքներ, որոնք վերաբերում են սեռատարիքային խմբերին առնչվող փոխանակության կառուցվածքին՝ պրոֆան և սակոալ մակարդակներում: Հաշվի առնելով նախորդ բաժիններում ներկայացված փոխանակությունների նկարագրությունները, կարելի է ուրվագծել դրանց սխեմատիկ պատկերը.⁴⁴

1. ա.պրոֆան մակարդակ (տղամարդիկ)
 - իրական փոխանակում (ապրանքադրամային)
 - խորհրդանշանային փոխանակում (հացկերույթ)
2. ր. սակիալ մակարդակ (կանայք)
 - սիմվոլիկ նվիրատվությամբ իրական փոխանակություն

⁴² Աճդ, էջ 7:

⁴³ Աճդ, էջ 9, 41, 51:

⁴⁴ Սիմետրիկ և ասիմետրիկ կապերի սխեմատիկ այս սկզբունքը փոխառված է Լ.Աբրահամյանից. *Л.Абрамян, указ. соч., с. 73.*

Այս սխեմաները ցույց են տալիս, որ փոխանակությունը երկու մակարդակում էլ ամբողջությամբ վերցրած կառուցվածքային առումով սիմետրիկ է: Դարբնոցի հետ սեռատարիքային խմբերի հաղորդակցումը պատկերող աղյուսակից ելնելով, կարելի է ասել, որ առաջին և երկրորդ սերունդներում դարբնոցի հետ ակտիվ հաղորդակցման կողմերը տղամարդիկ են, երրորդ սերնդում՝ կանայք: Ուսկայն այստեղ կա էական մի տարբերություն: Տղամարդիկ դարբնոցի հետ կապի մեջ են մտնում իրական-պրակտիկ նկատառումներով և հաղորդակցումը գտնվում է պրոֆան մակարդակում: Կանայք դարբնոցի հետ ակտիվ հաղորդակցման կիողներն են սակոալ մակարդակում:

Սեռատարիքային խմբեր	երեխա	հասուն	ծեր
կանայք	0	0	+
տղամարդիկ	Δ	+	-

0 - մուտքը դարբնոց արգելված է

+- դարբնոցի հիմնական հաճախողներ

- - դարբնոց այցելության ցածր հաճախականություն

Δ - դարբնոց, որպես հավաքատեղ այցելողներ:

1ա և 1բ գծապատկերները ցույց են տալիս, որ փոխանակությունները երկու մակարդակներում էլ կառուցվածքային առումով իրար համապատասխանում են: Այսինքն՝ հաղորդակցման համակարգում սեռատարիքային խմբերի հաղորդակցումը դարբնոցի հետ, լայն առումով վերցրած (պրոֆան և սակոալ մակարդակներ), կառուցվածքաբանորեն սիմետրիկ պատկեր ունի: Այն դեպքում, երբ առանձին տարիքային խմբերում, ըստ սեռային հատկանիշի, նույն կտրվածքով դիտարկման դեպքում ստացվում է ասիմետրիկ կառուցվածք (քառս): Նույնպիսի ասիմետրիկություն է նկատվում նաև առանձին վերցրած սեռային խմբերում, ըստ տարիքային հատկանիշի (տես աղ. 1): Ստացվում է, որ դարբնոցի հետ կապված համայնական կոմունիկացիոն համակարգում ներդաշնակությունն ապահովվում է համայնքի բոլոր անդամների մասնակցության չափով և առանձին դեպքերում ասիմետրիկությունը (քառս) ամբողջ համայնքի հա-

մակարգում ստեղծուն է սիմետրիկ կառուցվածք (կոսմոս):

2. Տարածության կազմակերպումը դարբնոցային մշակույթում Դարբնոցային տարածությունը ներառում է ներքին և արտաքին տարածական կառուցվածքները: Ներքինը բուն դարբնոցի տարածքն է, որն իր կառուցվածքով և օրենքներով գյուղի բնատարածքում ներկայանում է որպես մի միկրոաշխարհ: Ըստ այդ կառուցվածքի և օրենքների էլ կազմակերպվում է դարբնոցի ներսույթի ծևավորումը և իրերի տեղադրվածությունը: Արտաքինը դարբնոցի սահմաններից դուրս գտնվող, համայնքի հետ միկրոաշխարհի հաղորդակցման տարածությունն է: Հաղորդակցման տարածքին բնորոշ են որոշակի կապեր, որոնք պայմանավորում են գյուղի տարածքում դարբնոցի կոնկրետ տեղադրվածությունը:

Տարածության կազմակերպում ասելով հասկանում ենք իրերի տեղաբաշխումն ըստ ներքին տարածական կառուցվածքում գործող, ինչպես նաև ներքին ու արտաքին տարածությունների կապերն իրականացնող մեխանիզմների:

Վերև-ներքև հակադրությունը դարբնոցի տարածական կառուցվածքում:

Տարածական այդ հակադրությունը դարբնոցում առաջին հերթին դրսևորվում է գնդանի կառուցվածքում: Ուղղահայաց վիճակով գնդանն ունի երեք մաս՝ ներքին (ստորգետնյա) կոճղի հողի մեջ խրված մասը, բուն կոճղը և դրա վրա ամրացված երկաթե գնդանը: Աշխատանքի դադարին կամ ավարտից հետո վարպետի մուրճը միշտ դրվել է գնդանի վրա, կոթունով այն կողմը, որտեղ սովորաբար կանգնում է դարբինը:⁴⁵ Մուրճի այդպիսի տեղադրումը պատահական չէ՝ այն տեղադրվում էր գնդանի երկաթե մասի վրա ըստ իր երկնային պատկանելության հատկանիշի,⁴⁶ այսինքն՝ եռամաս կառուցվածքի վերին մասում, որը որպես Տիեզերական ծառի գագաթ նույնպես նշում է երկնային արարչագործական միջավայրը:⁴⁷

⁴⁵ Ա.Թադևոսյան. ԴԱՆ, տ. 1, էջ 19, տ. 2, էջ 13, 53:

⁴⁶ Հայոց մեջ մուրճի և երկաթի երկնային պատկանելության հետ կապված պատկերացումների մասին տե՛ս «Դարբինը և անձրևը ծիսական համակարգում» բաժինը:

⁴⁷ Եռամասն կառույցներում, որպես աշխարհի կառուցվածքի մոդել, վերին մասը համապատասխանում է տիեզերական ծառի գագաթին:

Այսպիսով, դարբնոցի տարածական կառուցվածքում վերև դիրքն ուղեկցում է երկինք բարի թւին, իսկ ներքև դիրքը դրան հակադիր չարին:⁴⁸ Վերջինին գնդանի ուղղահայաց կառուցվածքում համապատասխանում է ստորգետնյա մասը, իսկ միջնամասը կոճղը, որին հենվում են աշակերտների մուրճերը. նշում է մարդկանց միջավայրը՝ երկիրը: Նշված տարածական հակադրությունը տարածվում է նաև աշխատանքային այլ գործիքների տարածական դասավորության վրա: Դարբնի աշխատանքային բուն գործընթացում գործասվող հիմնական գործիքներից էին նաև տարբեր ունեւիները, որոնք տեղադրվում էին քուրայի (կրակարան) «քամկի պատի» վերնամասում:⁴⁹

Այժմ համառոտակի փորձենք ներկայացնել գնդանի եռամասն կառուցվածքի՝ ըստ վերև, մեջտեղ, ներքև մասերի կառուցվածքային վերլուծությունը: Ելակետ ընդունելով տրված սխեման (գծ. 1), փորձենք ստուգել դրա ճշմարտացությունը:

Գծապատկեր 1.

	Ձևդան	Տիեզերական ծառ
1	երկաթյա մաս	գագաթ
2	կոճղ	բուն
3	ստորգետնյա մաս	արմատ

Դրա համար վերլուծենք առաջադրված գծապատկերի (գծ. 1) երեք մասերն առանձին:

Գծապատկեր 2.

	Նշող	Նշվող
1	երկաթյա մաս	դարբնի միջավայր
2	ծառի գագաթ	երկնային աշխարհ

Երկրորդ գծապատկերում ներկայացված են գծ. 1-ի առաջին տողում առաջադրված հատվածների կողմից նշվող միջավայրերը: Նշվող 1-ը (դարբնի միջավայր) համապատասխանում է նշվող 2-ին (երկնային աշխարհ), նշող 1-ը՝ գնդանի երկաթյա մաս նշվող 1-ին (դարբնի միջավայր), իսկ նշող 2-

⁴⁸ Շատ ավանդություններու, այդ թվում Հին կտակարանայինում, երկինք - երկիր արտահայտությունը բուն իմաստի փոխարեն ոճնաւում է որպես հակադիր երևույթներ՝ բարին ու չարը նշող: Տես *Пятикнижие Моисеево или Тора: Еврейский М., 1991, с. 21. Новая толковая Библия, т. 1, 1990, с. 263.*

⁴⁹ Ա.Թադևոսյան. ԴԱՆ, տ. 1, էջ 66:

(զագաթ) նշվող 2-ի (երկնային աշխարհ):⁵⁰ Ատացվում է հետևյալ պատկերը՝ նշվող 1 = նշվող 2, նշող 1 = նշվող 1-ին և նշող 2 = նշվող 2: Եթե երեք հարաբերություններում կա համապատասխանություն, ապա ճշմարիտ կլինի նաև նշող 1-ը = նշող 2-ին:⁵¹

1-ին գծապատկերի երրորդ տողը ներկայացված է 3 գծապատկերում:

Գծապատկեր 3.

	Նշող	Նշվող
1	քոթուկ	աշակերտների միջավայր
2	ծառի բուն	մարդկանց աշխարհ

Կոճղին հենված աշակերտի մուրճը նշում է դրանց միջև զործող համապատասխանությունը՝ նշող 1 = նշվող 1-ին (դադարի ժամանակ կամ աշխատանքի ավարտին, եթե դարբնի մուրճը դրվում էր զնդանի վրա, ապա աշակերտների մուրճերը՝ կոճղին հենված, կոթունը վեր ցցած վիճակում):⁵² Աշակերտները մինչև վարպետի կոչում ստանալը, որպես նրա օգնականներ պատկանում էին երկուային աշխարհին կամ մարդկանց միջավայրին՝ նշվող 1-ը = նշվող 2-ին: Տիեզերական ծառի կառուցվածքում դրա բունը նշում է երկուային կամ մարդկանց աշխարհը՝ նշող 2-ը = նշվող 2-ին: Թվարկված համապատասխանություններից հետևում է, որ նշող 1-ը = նշող 2-ին:

Մի փոքր այլ է խնդիրը գծ. 1-ի 3 տողի դեպքում: Լկն, որ դարբինը ստորերկոյա չար ուժերի հակառակորդն է, մենք ծանոթ ենք, սակայն այստեղ չայլ ուժերը վկայող կոնկրետ ատղիբուտ (ինչպես 1-ին և 2-րդ մասերում՝ դարբնի և աշակերտի մուրճերը) չունենք: Միակ հուշող հատկանիշը կոճղի ստորգետնյա մասի հողի մեջ գտնվելն է: Եթե դա համարենք ընդունելի փաստարկ, ապա կոճղի ստորգետնյա մասին կոամապատասխանի ստորերկոյա աշխարհը, որն էլ որպես քառսային ուժերի միջավայր ընդունելի է դարձնում զնդանի ստորգետնյա մասի և Տիեզե-

րական ծառի արմատների միջև համեմատական զուգահեռների անցկացումը:⁵³ Վերն արված սխեմատիկ վերլուծությունների միջոցով պարզվեց զնդանի առանձին մասերի խորհրդանշանային դերը: Ամբողջության մեջ դրանց դիտարկումը թույլ է տալիս զնդանը դիտել որպես Տիեզերական ծառի համակարգված խորհրդանիշ (այս մասին կխոսվի նաև հետագա շարադրանքում):

Դարբնոցի ներքին տարածքի կազմակերպման մեջ կարևոր դեր ունի նաև աջ-ձախ դիրքորոշումը: Բոլոր հիմնական աշխատանքային գործիքները տեղադրում էին մուտքից աջ: Լեզակողմությունը գործում էր նաև աշխատանքային գործընթացներում զնդանի և քուրայի նկատմամբ դարբնի ընտրած դիրքում:⁵⁴ Աջը դարբնոցի տարածքում ավելի ապահով կողմ էր համարվում և ուներ դրական իմաստավորում՝ ի հակադրություն ձախի:⁵⁵

Դարբնոցի մշակութային տարածքի կազմակերպման կարևոր օղակներից է ներս-դուրս տարածական հակադրությունը: Այդ երկու միջավայրերը կապող դերում է դուռը: Մեր ուսումնասիրած միջավայրում ներս-դուրս տարածական հակադրությունը համապատասխանում է բարի-չար հակադրությանը: Դարբնոցի ներսի տարածքին բնորոշ են բարի, չաղխափան, կարգապահական հատկանիշներ: Լկն հասարակությանն անհրաժեշտ առօրեական իրերի պատրաստման միջավայր է՝ համայնքի տնտեսական կյանքը կազմակերպելու կարևոր օղակ, առանց որի

⁵⁰ Հայոց ավանդություններում դարբինը հաճախ ներկայանում է որպես երկնային, աստվածային կերպար, տես «Դարբինը և անձրևը ծիսական համակարգում» բաժինը:

⁵¹ «Նշան» հասկացության տեսական կիրառման համար հիմք են ծառայել Ռ.Բարտի և Ա. Լոսկի մի շարք դրույթներ: Տես *P. Barthes*, *указ. соч.*, *А. Ф. Лосев*, *Логика символа*.- *А. Ф. Лосев*, *Философия, мифология, культура*, М., 1991. *Его же*. *Знак, символ, миф*, М., 1982.

⁵² *Ա.Թաղևադյան*, *ԴԱՆ*, տ. 1, էջ 19, տ. 2, էջ 13, 33, 53:

⁵³ Ըստ գերմանական մի ավանդության, հերոսը թրի հարվածով ճեղքում է զնդանը մինչև կոճղի հատակը: Տես *А. Хойслер*, *Германский герольдический эпос и сказания о нибелунгах*, М., 1960, с. 398: Հնդեվրոպական լեզվի ռալկանյան ճյուղում բավիղը (լարիհինթոսը), քարանձավն ունեն նաև քարե սալի իմաստ, որում նկատելի է քարե զնդանի և քարանձավի սեմանտիկ ընդհանրությունը: Տես *А. А. Гиндин*, *Некоторые вопросы древнего балканского субстрата и адстрата*.- *Вопросы этногенеза и этнической истории славян и восточных романцев*, М., 1976, с. 55. Քարանձավն ունի չառո բնանատեղի սեմանտիկա, տես *G. Jones*, *Dictionary of Mythology, Folklore and Symbols*, N. Y., 1962, part 1, p. 300: Հայերեն «զնդան» բառը նույնպես ունի դարբնի զնդանի և ստորերկոյա մութ բանտի, մութ տեղի իմաստ: Տես *Յր. Աճառյան*, հ. 2, էջ 102:

⁵⁴ *Ա.Թաղևադյան*, *ԴԱՆ*, տ. 1, էջ 17-19, 64-66, 74, տ. 2, էջ 15, 532-53:

⁵⁵ Չախից աջ ուղղվածությունն ընդհանրապես բնորոշ է արաբազգործական գործընթացներին: Տես *Д. MacLagan*, *op. cit.*, p. 21:

միջնորդության գյուղի տնտեսական կյանքը կշեղվեր գործնական հունից և կարող էր կանգնել տնտեսական քառսի առջև: Լինելով կարևոր տնտեսական օջախ, դարբնոցը նույն-քան կարևոր դեր ուներ նաև գյուղի սրբազան-տոնական կյանքի կազմակերպման գործում:⁵⁶ Դարբնոցն այն եզակի օջախներից էր, որտեղ կազմակերպվում էր պայքարը չար ուժերի դեմ, ուստի և պատահական չէ դարբնոցի ներքին տարածքի իմաստավորումը բարի և տիեզերապահական հատկանիշներով:⁵⁷ Դարբնոցային մշակույթում, ներս-դուրս հակադրությունը համապատասխանում էր յուրային-օտար հակադրությանը: Ներսի մարդ յուրային համարվում էին միայն արհեստով զբաղվողները՝ դարբինն աշակերտների և օգնականների հետ: Մնացած բոլորը դարբնոցի մշակութային տարածքում համարվում էին դրսի մարդ և ոչ յուրային, ոչ սուրբ:

Նրանք չարի պոտենցիալ կրողներն էին և անհրաժեշտության դեմքում չարից ազատվելու համար դիմում էին դարբնոց չարխափան հմայիլներ ձեռք բերելու խնդրանքով: Դրսի և ներսի աշխարհները բաժանող (միևնույն ժամանակ և կապող) սահմանը դարբնոցի դուռն էր:⁵⁸ Դռան իմաստավորումը, որպես ներսի և դրսի աշխարհները կապող սահմանի, հայոց մեջ տարածված երևույթ է: Դռան շեմին կախվել կամ ամրացվել են զանազանի չարխափան հմայիլներ, քանի որ, ըստ ժողովրդական պատկերացումների, չարքերը միշտ դռան շեմին են «խփում» մաղդկանց:⁵⁹ Չարքերին քշելու, նրանց մուտքը դարբնոց արգելելու

գործառույթն ընկած էր զնդանի վրա: Ձնդանն ունի «պոզ», «մեջք» և «դմակ»:⁶⁰ Մեզ հանդիպած ավանդական դարբնոցներում զնդանի «պոզ»-ն ուղղված է դեպի դուռը՝ դրսի աշխարհի սահմանը:⁶¹ Այսինքն «պոզ»-ի գործառույթը համապատասխանում է դռների մուտքից կախվող պահպանակներին (որը, ի դեպ, հաճախ դարբնի կողմից պատրաստված պայտն էր լինում):⁶² Այսպիսով, դարբնոցում դուռը որպես ներսի և դրսի աշխարհների սահման, իր չարարգել, բաժանող դերը կատարում էր զնդանի «պոզի» գործառույթյամբ, որի ուղղվածությունը չարին ստիպում էր մնալ իր միջավայրում, սահմանազատելով չարն ու բարին այնպես, ինչպես դուռը «ներսը» և «դուրսը»:

Վերն ասվածը սխեմատիկորեն պատկերելու դեպքում կարելի է ստանալ հետևյալը. ներս (րարի)-դուռ-դուրս (չար), որն էլ ավելի ընդարձակված կլինի՝

Ներս զնդանի «պոզ»-դուռ-«դուրս»:

Արանից ելնելով, կարելի է կազմել հետևյալ աղյուսակը

	Սարժոժ	Կառուի	Գրոխակու չարխափան	Սակ մուտք	Սահման գրոխափան	Վերսի աշխարհ
դուռ	+	+	-	+	+	-
զնդանի պոզ	-	-	+	-	-	+

Աղ. 1-ը ցույց է տալիս, թե գործառույթային առումով դուռն ու զնդանի «պոզը» որ կետերում են նույնանում: Դուռը լինելով սահմանային կապող և բաժանող հատկությունների կրողը, միևնույն ժամանակ չպատկանելով ներսի աշխարհին, չարի պոտենցիալ կրողն է: Այդ չարի չեզոքացման գործառույթը կրում է զնդանի «պոզ»-ը, որը լրացնում և հստակաց-

⁵⁶ Ծխա-առասպելական և սոցիալական կառույցներն ունեն հստակ ստիպողականություն: Դա է պայմանավորում համայնքի հաղորդակցման սրբազան և աշխարհիկ ուղորտներում դարբնի և դարբնության դիրքի ու գործառույթների համաստիսայինությունը: Այս երևույթների ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունի Ա.Ջոլտտարյովը: Տես *A.M. Золотарев. Родовое строение первобытная мифология*, М., 1964: Տնտեսակտն, սոցիալական և հալուստալիքային փոխհարաբերությունների մասն մոտեցման մասին տես նաև *P.Radin, The World of Primitive man*, p. 137-151, 214.

⁵⁷ Դրա արտահայտություն կարելի է համարել նաև դարբնի «հաջող ոտքի», «բարի աչքի» հետ կապված ավանդությունը: *Ա.Թաղևադյան*, ԴՄՆ, տ. 2, էջ 21:

⁵⁸ Որոշ դեպքերում դարբնոցներն ունեցել են «ներսի» և «դրսի» դռներ, որին կանդրադառնանք ստորև:

⁵⁹ *Ա.Թաղևադյան*, ԴՄՆ, տ. 3, էջ 66: Դուռը, դռան շեմքը որպես չարից սպառնալի վտանգի տեղ ընկալելը բնորոշ էր նաև իհն կտակարանային ավանդություններին: Տես *Пятикнижие Моисеево или Тора*, с. 67:

⁶⁰ *Ա.Թաղևադյան*, ԴՄՆ, տ. 1, էջ 7, տ. 2, էջ 15: Ձնդանի շնչավորման ժողովրդական այս միջոցը թույլ է տալիս ենթադրել, որ զնդանին տրվել են խոյի հատկանիշներ, որը, ըստ ավանդության, մարմնավորում է կայծակն ու ամպրոպը: Վերջինս էլ համոզիչ է դարձնում զնդանի երկնային սլաուկանելության առաջ քաշված վարկածը:

⁶¹ *ԱՄՊ*, տ. 2, էջ 13:

⁶² *ԱՄՊ*, տ. 1, էջ 54, տ. 3, էջ 18:

նում է դռան սահմանային, բաժանող դերը: Այս առումով հետաքրքիր է դիտարկել նաև այն դարբնոցների տարբերակը, որոնք ունեցել են «ներսի» և «դրսի» դռներ: Նախ, պետք է ասել, որ դարբնոցը գյուղում միշտ կառուցվել է դարբնի տանը կից: Մեզ համդիպածներում հիմնականում կարելի է առանձնացնել նման համալիրի երկու մոդել: Առաջինը, գտնվելով տան բակում, ուներ երկու մուտք՝ փողոցի կողմից («դրսի դուռ») և բակի կողմից («ներսի դուռ»): Բացի դարբնի ընտանիքի տղամարդ անդամներից (որոնք տիրապետում էին դարբնության այս կամ այն հնարքին), ուրիշ ոչ մեկի չէր թույլատրվում «ներսի դռնով» ելումուտ անել: Երկրորդ մոդելը նույնպես գտնվում էր տան համալիրում: Ասկայն այն, ի տարբերություն առաջինի, ուներ մեկ մուտք բակի կողմից և պատվորատուն դարբնոց կարող էր մտնել սրայն բակ մտնելուց հետո: Առաջին դեպքում զործում են հետևյալ դիքորոշումները.

*Ներսի մուտք - դրսի մուտք
յուրային - օտար
բարի - չար*

Երկրորդ տարբերակում գործող մեկ մուտքը, ըստ էության, հաշվի առնելով վերն արված ներս-դուրս դիրքավորման հետ կապված վերլուծությունը, կատարում է առաջին տարբերակի ներսի և դրսի դռների զործառույթը միաժամանակ, պահպանելով հիմնական ներսի և դրսի աշխարհները կապող և բաժանող օղակի գործառույթ:

Դառնալով «ներսի» և «դրսի» մուտքերով դարբնոցի տարբերակի քննարկմանը, անհրաժեշտ է նշել, որ դրանում զնդանի «պոզ»-ն ուղղված է դեպի «դրսի» դուռը, որտեղից ելումուտ են անում օտարները: Հատկանշական է նաև, որ վերջիններիս տեղը դարբնոցում դռան շեմի մոտ էր: Դրսի դուռն այս տարբերակում պահպանում է սահմանային զործառույթը՝ վերը նշված հատկանիշներին համապատասխան: Ինչ վերաբերում է ներսի դռանը, ապա դա դարբնոցի աշխատողների, արհեստի հետ առնչվող մարդկանց համար էր նախատեսված⁶³: Սահմանային առումով դա նույնպես արտահայտված բնույթ ուներ և հսկվում էր ոչ թե զնդանի «պոզի», այլ հենց իր՝ դարբնի

կողմից: Այդ սահմանը խախտման ենթակա չէր և դրա հետ առնչվող փաստերին արդեն ծանոթ ենք:⁶⁴ Դրա միջոցով դրսի աշխարհի հետ կասյի մեջ էին մտնում ներսի՝ արհեստին հաղորդակից անդամները, իսկ դրսի դուռն ապահովում էր դարբնոցի հետ արտաքին միջավայրի՝ գյուղի բնակիչների հաղորդակցումը:

Դարբնոցի տարածական կառուցվածքում էական դեր ուներ նաև կենտրոն-ոչ կենտրոն հակադրությունը: Կենտրոն հասկացությունը դարբնոցում սերտորեն առնչվում է զնդանի հետ: Նույնիսկ այն դեպքում, երբ տարածականորեն զնդանը չի գտնվում դարբնոցի կենտրոնում, դիտվում է որպես կենտրոն:⁶⁵ Հարց է առաջանում՝ զնդանն է մշում կենտրոնը, թե՞ տարածական կենտրոնն է պայմանավորում զնդանի տեղադրումը: Առկա նյութը կողմնորոշում է դեպի առաջինը՝ զնդանը չի մշվում որևէ մշանով, այլ ունի կենտրոնը մշողի դեր և որպես այդպիսին նույնանում է նրա հետ, ձեռք բերելով կենտրոնի իմաստ: Այստեղից ծագում է մի նոր հարց. զնդանը դարբնոցի կենտրոնը մշող մշան է (խոսքը մշող-մշվող հարաբերության մասին է), թե՞ խորհրդանշան, որը մշող-մշվող ուղղակի կապից բացի ավելի բազմակողմանի և միջնորդված հարաբերություն է ենթադրում: Եթե ընդունենք, որ ռացիոնալ մտածողության մակարդակում (1) զնդանը պարզապես մշում է տարածական կենտրոնը, ապա զնդան-կենտրոն հարաբերությունը կարելի է արտահայտել մշող-մշվող կապով: Ջնդանն այս հարաբերության մեջ իմաստային այլ համապատասխանություն կամ կապ չունի, բացի կոնկրետ երևույթը տարածական կենտրոնը մշող զործառույթից: Այս մակարդակում զնդանն իրական իմաստից բացի (սարք, որի վրա իրականացվում է կոման-կոփման զործընթացը), այլ իմաստ չի կիում: Ջնդանի իրական իմաստը վերահիմաստավորվում է սրբազան մտածողության մակարդակում (2): Այս մակարդակում այն ունի Տիեզերական ծառի, Այան կամ Տիեզերական երեք ոլորտները կապող Առանցքի իմաստ, որտեղ է գտնվում նաև Տիեզերքի արարչա-

⁶⁴ Անդ:

⁶⁵ Շատ անգամ այն հարցին, թե որտեղ էր տեղադրված զնդանը, պատասխանում էին դարբնոցի կենտրոնում, որն իրականում չէր համընկնում կենտրոնի հետ:

⁶³ Ա.Թաղևադյան, ԴՍՆ, տ. 2, էջ 10:

գործական կենտրոնը: Եթե համեմատենք ռազմական մտածողության մակարդակում մեր կողմից պայմանականորեն առաջադրած զնդան-կենտրոն հարաբերությունը սրբազան մակարդակում գոյություն ունեցող Տիեզերական ծառ-արարչագործական կենտրոն հարաբերության հետ, ապա կտեսնենք, որ երկուսում էլ գործում է նշող-նշվող հարաբերությունը (զժ. 4):

Գծապատկեր 4.

	Նշող	Նշվող
1	զնդան	տարածական կենտրոն
2	տիեզերական ծառ	արարչագործական կենտրոն

«Նշող» սյունակում նշող 2-ը (Տիեզ. ծառ) նշող 1-ի (զնդան), սրբազան իմաստն է: Նույնը չի կարելի ասել նշվող սյունակի մասին: Այստեղ նշվող 1-ի և նշվող 2-ի միջև նկատելի չէ ինչ-որ կապի առկայություն: Որակական նոր կապ է նկատվում նշող 1-ին նշվող 2-ի հարաբերությունում: Սրբազան մակապակում նշող 1-ն իր սրբազան իմաստի միջոցով (նշող 2) նշում է նշվող 2-ին: Նշող 1-ին նշվող 2-ի միջև գոյություն ունեցող միջնորդավորված այս հարաբերությունում նշող 1-ը, ըստ իս, ծնաք է բերում խորհրդանիշի գործառույթ: Մեր կողմից պայմանականորեն ընդունված ելակետին դառնալով, կարելի է նշել. նախ զնդանն ունի տարածական կենտրոնը նշելու գործառույթ: Երկրորդ զնդանն ունի սրբազան կենտրոնը նշող խորհրդանիշի իմաստ: Երրորդ զնդանի խորհրդանշային գործառույթը, որպես մշակութային կայունացած տարբ. դարբնոցային մշակույթի արժեք է և ունի դարբնոցի մշակութային տարածքի կազմակերպման կարգավորող հատկություն: Չորրորդ զնդանի գործածական իմաստը նույնպես ենթարկվում է նշված կարգավորման մեխանիզմին: Մեր կարծիքով, սա է դարբնոցի կենտրոնը և զնդանը հոմանիշներ դիտելու ալտառաջ: Այսպիսով, կենտրոն-ոչ կենտրոն տարածական հակադրությունում սրբազան տարածքն է, որի մեջ մտնում են զնդանը, որպես կենտրոնի խորհրդանիշ և դրա շրջապատը կազմող մյուս հիմնական սարքավորումները: Լկն նաև դարբնի գործունեություն միջավայրն է: Ոչ կենտրոնի մեջ մտնում են դարբնոցի պատերին հարող ներքին տարած-

քը և դուռը: Այս տարածքում տեղադրված հաստոցները կամ ռաբբնոցային սարքավորումները չեն կրում կենտրոնում գտնվող սարքավորումներին բնորոշ սրբազանացված իմաստ:⁶⁶ Իսկ դուռը, ինչպես տեսանք. նույնիսկ չարի կրողն է և դարբնոցում ունի հասարակ մահկանացուների միջավայրի դեր: Եթե փորձենք ներկայացնել կենտրոն-ոչ կենտրոն հակադրությունը դարբնոցում դրան համապատասխանող ուղեկցող հակադրություններին գուգահեռ, ապա այն կլինի այսպիսին.

կենտրոն	↔	ոչ կենտրոն
զնդան	↔	դարբնոցի պատեր, դուռ
հիմնական	↔	երկրորդական
սարքավորումներ	↔	սարքավորումներ
սրբազան	↔	աշխարհիկ
դարբնոցի մարդ	↔	այլ մարդ
յուրային	↔	օտար

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ դարբնոցի ներքին տարածքի կազմակերպումն իրականացվում է ներս-դուրս, աջ-ձախ, վերև-ներքև, կենտրոն-ոչ կենտրոն տարածական երկհակադրությունների միջոցով: Թվարկված շարքը կառուցված է կենտրոն-ոչ կենտրոն հակադրության հիմքով և դրանցում կարևոր դերը, որը նշված դիրքավորումները կապող տարածական կետն է նաև, ընկած է զնդանի որպես կենտրոնի և առանցքի վրա: Դա է նաև դարբնոցի մշակութային ներքին տարածքի կազմակերպման գլխավոր կարգավորիչ գործոնը:

Գյուղի մշակութային տարածքում դարբնոցի տեղադրման խնդրի ըմբռնողության առումով, անհրաժեշտ է ընդհանուր գծերով նշել գյուղի մշակութային տարածքի կազմակերպման մի քանի հարց: Մեր ուսումնասիրած շրջաններում գյուղերի կառուցվածքում հստակորեն առանձնանում էր գյուղի կենտրոն տարածական միավորը: Գյուղն ուներ նաև տարածական սահմաններ, սկիզբ և վերջ, վերին և ներքին թաղեր: Դրանցից յուրաքանչյուրը կատարում էր որոշակի գործառույթ գյուղի տարածքը կազմակերպելու մեջ: Գյուղի սահմանը որոշակիորեն նշում էր դրա մշակութային տարածությունը: Բնակելի նոր շենքերը,

⁶⁶ Դրանք հիմնականում առարկայի պատրաստման մեջ անմիջականորեն կիրառում չունեցող սարքերն են:

որոնք կառուցվում էին ընդունված սահմաններից դուրս, համարվում էրն «գյուղից դուրս» կառուցված տներ: Դրանք հիմնականում կառուցվում էին գյուղի «վերջը» նշող սահմանից դուրս և ստանում «նոր թաղ» անվանումը: Գյուղի կենտրոնը տեղադրված էր ընդունված տարածական սահմանին համապատասխան: Այն օլուդի աշխարհիկ և սրրազան կյանքի կազմակերպման րջիջն էր, որտեղ գտնվում էին գյուղի կյանքում կարևոր աշխարհիկ և սրրազան հաստատությունները: Լյնտեղ էին կենտրոնացված գյուղում ազդեցիկ ղեր ունեցող հեղինակավոր մարդկանց տները, պաշտոնատար անձանց նստավայրը, եկեղեցին, գյուղի «մեծ» աղյուրը, արհեստավորների տներն ու արհեստանոցները՝ դարբնոցը, հյուսնոցը: Այն նաև հասուն տղամարդկանց, գլխավորապես ծերերի հավաքատեղին էր, տոների և ծեսերի անցկացման գլխավոր տեղը: Գյուղի կենտրոնը ծայրամասերի հետ երկմաս հակադրությամբ դիտարկելու դեպքում կարելի է առանձնացնել հետևյալ հակադրությունները.

- կենտրոն ⇔ ոչ կենտրոն
- ղեկավարող ⇔ ենթակա
- սրբազան ⇔ աշխարհիկ
- հեղինակավոր անձինք ⇔ շարքային գյուղացիներ
- տղամարդիկ ⇔ կանայք
- հասուն մարդիկ ⇔ երեխաներ, չամուսնացած երիտասարդներ

Այսինքն՝ գյուղի կենտրոնին բնորոշ նշված հատկանիշները որոշող դեր ունեին «կենտրոն» տարածական միավորի կազմակերպման մեջ: Ամեն մի հաստատության գյուղի կենտրոնում գտնվելը պայմանավորված պետք է լիներ այն բանով, թե այդ հաստատությունը որքանով է թվարկված հատկանիշների կրողը: Վայոց ձորի դաբրնոցային ավանդույթներ ունեցող գյուղերում դարբնոցը գտնվել է եկեղեցուն հարող գյուղի կենտրոնական տարածքում, հաճախ՝ Մեծ աղյուրի հարևանությամբ: Դարբնոցի նման ավանդական տեղադրվածություն հատուկ է եղել մեր ուսումնասիրած Արենի, Աղավնաձոր, Խաչիկ, Շատին, Մալիչկա, Գնդեվազ, Մարտիրոս գյուղերին:⁶⁷ Այն

պայմանավորված է եղել դարբնոցի թե կենցաղային-աշխարհիկ և թե պաշտամունքային գործառույթով: Դարբնոցի կենտրոնական տեղադրվածությունը կենցաղային առումով կապվում է գյուղացիների գնալ-գալու հարմարության հետ: Պաշտամունքային առումով այն մտնում է սրրազան կենտրոնի տարածքի մեջ: Մենք ծանոթ ենք համայնքի սրրազան կյանքում դարբնոցի և դարբնի հետ կապված պաշտամունքային տարրերի և դրանցում դաբրնի տիեզերապահպան, չարխափան հատկանիշներին: Վերը ծանոթացանք նաև դարբնոցի մշակութային տարածքի սրրազանացված իմաստավորման և դրա խորհրդանշանային ու կառուցվածքային դրսևորումներին: Այսպիսով, դարբնոցը կարելի է դիտել որպես տնտեսական և պաշտամունքային կարևոր օղակ, տղամարդկանց միջավայր: Եթե նկատի ունենանք նաև դարբնի պատկանելությունը գյուղի հեղինակավոր մարդկանց թվին, ապա օլուդի տարածական կառուցվածքի կենտրոն-ոչ կենտրոն հակադրությունում, դարբնոցը հատկանիշներով համապատասխանում է կենտրոնին, որը բացատրելի է դարձնում գյուղում դարբնոցի կենտրոնական տեղադրվածությունը:⁶⁸

կենտրոնը բնորոշող հատկանիշներ	գյուղի կենտրոն	դարբնոց
ղեկավարող	+	-
սրբազան	+	+
հեղինակավոր	+	+
տղամարդիկ	+	+
հասուն մարդիկ	+	+
տնտեսական կենտրոն	+	+

ծության մասին տես նաև՝ Գ. Դակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 145:

⁶⁸ Այս առումով հետաքրքիր մի ավանդություն է գրանցվել Գնդեվազ գյուղում, ըստ որի գյուղի հիմնադիրը եղել է գյուղի առաջին դարբինը: Նա շրջապատի թուրքական գյուղերի միջև ընկած հանգուցային մի տեղում կառուցում է իր դարբնոցը, որի շուրջն էլ հետագայում ձևավորվում է գյուղը: Տես Ա. Թաղևադյան, ԴԱՆ, տ. 2, էջ 65: Նման թեմայի կարելի է հանդիպել նաև Ազաթանգեղոսի երկում էջմիածին քաղաքի առաջացման ավանդությունում, տես Ազաթանգեղոս, Կայոց պատմություն, Եր., 1983, էջ 413-427: Նման ավանդություններ կան նաև Կիև և Վիլնյուս քաղաքների առաջացման պատմություններում: Տես В.В.Иванов, В.Н.Топоров, Мифологическое название как источник для реконструкции этногенеза и древностей истории славян, с. 111, 114-116, 126.

⁶⁷ Ա. Թաղևադյան, ԴԱՆ, տ. 1, էջ 3, 63, 74; տ. 2, էջ 9, 51, 68; տ. 3, էջ 58: Դարբնոցի կենտրոնական տեղադրվա-